ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2023 թվականի N 805 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱ-ԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 976-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի «Պետական գույքն օտարելու մասին» N 976-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «876.95» թիվը փոխարինել «943.75» թվով, իսկ «2603819 վկայական, տրված՝ 30.03.2009 թ.» բառերը՝ «21102022-01-0180 վկայական» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում «35 265 012» թիվը փոխարինել «37 950 000» թվով.

3) որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետում «մեկամսյա» բառը փոխարինել «տասներկուամսյա» բառով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում, հիմք ընդունելով սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետից բխող փոփոխությունը, իրականացնել քաղաք Երևան, Կենտրոն, Մոսկովյան փողոց 37, թիվ 37 տարածք հասցեում գտնվող գույքի օտարման նպատակով աճուրդի հաղթող մասնակցի (այսուհետ՝ գնորդ) կողմից իրականացված վճարումներից պետության և համայնքային համապատասխան հաշիվներին արդեն իսկ բաշխված գումարների վերաբաշխում.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո ապահովել աճուրդի արդյունքների մասին արձանագրության և այլ անհրաժեշտ փաստաթղթերում սույն որոշման 1-ին կետից բխող համապատասխան փոփոխությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

25.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ